ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ջարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-424-24.12.2013-ՊԻ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով նախատեսվող լրացման վերաբերյալ հայտնում ենք, որ այն ընդհանուր առմամբ համապատասխանում է սնանկության կառավարման ոլորտում մշակվող քաղաքականությանը: Այն է՝ սնանկության գործընթացում աճուրդի միջոցով գույք ձեռք բերողները պետք է առավելապես ազատվեն ածանցյալ պահանջներով դատարան դիմելու խնդրից: Միևնույն ժամանակ նշված փոփոխությունները կարող են իրականացվել պայմանով, որ սնանկության իրավահարաբերությունները կարգավորող ոլորտում իրականացվեն մի շարք այլ փոփոխություններ, որոնք կերաշխավորեն սնանկության կառավարիչների անկախությունն ու բոլոր մասնակիցների իրավունքների պաշտպանվածությունը, ինչպես նաև գործընթացները ոչ ճիշտ կազմակերպելու դեպքում ամբողջ պատասխանատվությունը կդրվի կառավարիչների վրա:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունում քննարկվում է մի շարք օրենքներում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որոնցում բացառվում է կատարողական թերթի տրամադրումը և նախատեսվում է, որ հարկադիր կատարման պետք է ներկայացվեն դատական ակտերը (վճիռներ և որոշումներ): Առաջարկում ենք ներկայացված օրենքի նախագիծը քննարկել և վերախմբագրել նշված մոտեցման շրջանակներում:

Հաշվի առնելով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը կարող է ընդունելի համարվել, եթե դատարանի իրավասությանը վերաբերող համապատասխան փոփոխություններ կատարվեն նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում, «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և հարակից որոշ այլ իրավական ակտերում: Միաժամանակ մեր պատրաստակամությունն ենք հայտնում համագործակցել օրենքի նախագծի հեղինակի հետ՝ օրենքի նախագծի լրամշակման հարցում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***դրական ազդեցություն:***

Նախագծով սնանկության գործով կառավարիչը պարտավորվում է դիմել դատարան օտարված գույքը գնորդին հանձնելու նպատակով կատարողական թերթ տրամադրելու պահանջով, ինչն էապես կդյուրացնի սահմնված կարգով օտարվող գույքի վաճառքի գործընթացը՝ նվազեցնելով օտարվող գույքի գնորդի կողմից գույքը գնելուց հետո դատական գործընթացների մեջ ներքաշվելու ռիսկերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ նախատեսվում է ավելի դյուրացնել «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով օտարվող գույքի վաճառքի գործընթացը, որի արդյունքում կպաշտպանվեն ինչպես պարտատիրոջ, այնպես էլ պարտապանի շահերը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-424-24.12.2013-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքը լրացնել նոր 19.2 հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 19.2.* Սնանկության գործի շրջանակներում օտարված գույքը գնորդին հանձնելու կամ օտարված գույքից նախկին սեփականատիրոջը, ինչպես նաեւ այլ անձանց վտարելու համար կատարողական թերթ տալը

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գույքը օտարվելու դեպքում սնանկության գործով կառավարիչը պարտավոր է դիմել սնանկության մասին վճիռ կայացրած դատարանին.

1. օտարված գույքը գնորդին հանձնելու համար կատարողական թերթ տրամադրելու խնդրանքով,

2. օտարված անշարժ գույքի նախկին սեփանակատիրոջը, ինչպես նաեւ այլ անձանց, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով, վտարելու համար կատարողական թերթ տրամադրելու խնդրանքով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ վիճակը եւ առկա խնդիրները

Գործող իրավակարգավորման շրջանակներում սնանկ ճանաչված պարտապանի շարժական գույքը հրապարակային սակարկություններով կամ ուղղակի վաճառքով վաճառելու դեպքում, եթե գնված գույքի նախկին սեփականատերը հրաժարվում կամ խուսափում է գույքը հանձնել նոր սեփականատիրջը, ապա գույքի սեփականատերը ստիպված է լինում դիմել դատարան՝ գնված գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցով: Սնանկ ճանաչված պարտապանի անշարժ գույքը հրապարակային սակարկություններով կամ ուղղակի վաճառքով գնած անձը գույքի նախկին սեփականատիրոջը, ինչպես նաեւ այն անձնաց, որոնց օգտագործման իրավունքը օրենքով սահմանված կարգով գրանցված չէ, անշարժ գույքից վտարելու համար ստիպված է դիմելու դատարան՝ վերը նշված անձանց վտարելու համար:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, որպես ընդհանուր սկզբունք, սահմանում է, որ վաճառողը պարտավոր է գնորդին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից ազատ գույք:

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գույքի օտարման դեպքում, որպես վաճառող, հանդես է գալիս սնանկության գործով կառավարիչը: Այսօր գոյություն ունեցող կարգավորումը խոչընդոտում է պարտապանի գույքի օտարման արդյունավետ մեխանիզմի ստեղծմանը: Օտարվող գույքի պոտենցիալ գնորդները խուսափում են «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության սահմանված օրենքով օտարվող գույք գնելուց, քանի որ չի բացառվում գույքը գնելուց հետո ստիպված լինեն ներքաշվել դատական պրոցեսի մեջ, որպեսզի ապահովեն իրենց, որպես սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը եւ գնված գույքի փաստացի տնօրինմանը անցնելը: Արդյունքում քիչ չեն դեպքերը, երբ գնորդների սակավության պատճառով հրապարակային սակարկություններով վաճառված գույքի գինը անհամեմատ ցածր է լինում գույքի շուկայական արժեքից: Հաշվի առնելով սնանկության իրավահարաբերությունների այն առանձնահատկությունը, որ ամբողջ գործընթացը տեղի է ունենում դատարանի հսկողության տակ, որը եւ ապահովում է ամբողջ

գործընթացի օրինականությունը, գտնում ենք, որ առաջարկվող փոփոխությունները թույլ կտան ավելի դյուրացնել «Սնանկության մասին» օրենքով սահմանված կարգով օտարվող գույքի վաճառքի գործընթացը:

Առաջարկվող լուծումը

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում առաջարկվող լրացումը «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարտապանի գույքը վաճառելու դեպքում սնանկության կառավարչին կպարտավորեցնի դիմել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը կայացրած դատարանին գնված գույքը (շարժական) գնորդին հանձնելու համար կատարողական թերթ տալու համար:

Անշարժ գույքի վաճառքի դեպքում սնանկության գործով կառավարիչը պարտավոր է դիմել սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացրած դատարանին, վաճառված բնակարանը, բնակելի տունը կամ այլ շինությունը զբաղեցնող պարտապանին, ինչպես նաեւ այն անձանց, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով, վտարելու համար կատարողական թերթ տալու համար:

Առաջարկվող լրացումը կապահովի՝

1. պարտապանի գույքի օտարման առավել արդյունավետ, համապարփակ մեխանիզմի ներդրում,

2. գույքի գնորդին կազատնի իր սեփականության իրավունքը ամբողջ ծավալով իրականացնելու համար դատական պաշտպանության դիմելու անհրաժեշտությունից,

3. առանց այդ էլ ծանրաբեռնված դատարաններին անհարկի միջամտությունից,

4. պարտատիրոջ եւ պարտապանի շահերի պաշտպանություն:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գույքի օտարման գործընթացների թվի աճ, գնորդների իրավունքների պաշտպանություն, առավել բարձր գնով գույքի օտարում, որի արդյունքում կպաշտպանվեն ինչպես պարտատիրոջ, այնպես էլ պարտապանի շահերը: